

6989



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող՝ Տիգրան Գաբրիելյան



2024թ.  
06.24թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 092 - 24

Նախաձեռնող՝

«Ստեփծոր» ՍՊԸ  
ք. Երևան, Նալբանդյան փողոց 29/36

Գործունեությունը՝

Սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի  
Գետավան տեղամասի թիվ 78P հորատանցքից ջրի  
արդյունահանում ձեռնարկատիրական նպատակով  
Լոռու մարզի Ստեփանավան համայնք, Ձորագետ-Տաշիր վտակ 3 հողամաս

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 092 - 24

«21» հունիսի 2024թ.

Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի Գետավանի տեղամասի թիվ 78P հորատանցքից ջրի արդյունահանում ձեռնարկատիրական նպատակով

Նախաձեռնող՝	«Ստեփծոր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզի Ստեփանավան համայնքի, Ստեփանավան բնակավայրի, Գետավան տեղամաս, Ձորագետ-Տաշիր վտակ 3 հողամաս

**Ներածական մաս.** Փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ գործունեությունն իրականացվելու է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի Գետավանի տեղամասի թիվ 78P հորատանցքի տարածքում: Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 11-րդ կետի «ե» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները՝

- Սեփականության վկայականները՝ N 28112023-06-0052, N 23022023-06-0009, որտեղ՝ հորատանցքի հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի, իսկ արտադրամասի հողի նպատակային նշանակությունը ջրային է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ջրային:

- Տրված ջրօգտագործման թույլտվությունը՝ N 000230

**Նկարագրական մաս.** Լոռու սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի Գետավանի հորատանցքի Թիվ 78P տեղամասը գտնվում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի, Ստեփանավան բնակավայրի վարչական տարածքում, Տաշիր գետի կիրճում,





որը երկու կողմերից շրջափակված է կտրուկ թեքություններով /լեռնալանջերով/: Գործունեության նպատակն է արդյունահանել ստորերկրյա քաղցրահամ ջուր՝ ձեռնարկատիրական նպատակներով: Այն հնարավորություն կստեղծի բնակչությանը մատակարարել խմելու ջուր, ելնելով էկոլոգիապես ավելի մաքուր խմելու ջրի պահանջարկի բավարարման անհրաժեշտությունից: Ընկերությունը շալցված քաղցրահամ ջուրն իրացնելու է ՀՀ-ում և արտերկրում:

Լոռու սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի Գետավանի տեղամասի մանրամասն հետախուզական աշխատանքները կատարվել են 1992-1998թթ.-ին՝ 16 հորատանցքերով: Հաշվարկվել և 01.01.1999թ.-ին հաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի(ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 9. 30.11.1999թ.): Լոռու սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի Գետավանի տեղամասի շահագործական պաշարները կազմում է 509.0լ/վրկ կամ 43.98հազ.մ<sup>3</sup>/օր, այդ թվում՝ • Նովասելցովո խմբի 10 հորատանցքերով՝ 315.0 վ/վրկ կամ 27.22 հազ. մ<sup>3</sup>/օր, • Ակսյուտինի 1 հորատանցքով՝ 49.0.0 վ/վրկ կամ 4.23 հազ.մ<sup>3</sup>/օր, • Գետավանի 2 հորատանցքերով՝ 87.0 վ/վրկ կամ 7.52 հազ.մ<sup>3</sup>/օր, • Տաշիրի 3 հորատանցքերով՝ 58.0 վ/վրկ կամ 5.01 հազ.մ<sup>3</sup>/օր:

Ընկերության կողմից կատարված դաշտային ակնադիտական և չափագրական աշխատանքի արդյունքում պարզվել է, որ թիվ 42 հորատանցքի փաստացի ծախսը կազմում է 48.0 վ/վրկ, իսկ թիվ 78P հորատանցքի փաստացի ծախսը՝ 5.5 վ/վրկ սահմաններում է: Ընտրվել է 78P հորատանցքից արդյունահանումը, քանի որ Ընկերության կողմից պահանջվող քաղցրահամ ջրի ջրաքանակը կազմելու է 5.5 վ/վրկ: Ջրի շալցումը կատարվելու է գոյություն ունեցող արտադրամասում /պոմպակայանի շենքի համապատասխան վերանորոգումից հետո/, տարեկան՝83.160հազ. մ<sup>3</sup> քանակով: Ջրիավաք հորատանցքից գործարանի շալցման արտադրամաս քաղցրահամ ջրի տեղափոխումը կիրականացվի գոյություն ունեցող վերգետնյա՝ 73մմ-89մմ տրամագծի, 770մ երկարության խմելու ջրի համար նախատեսված մետաղեպլաստե խողովակով՝ գրունտային ճանապարհին զուգահեռ:

Շշալցումը կատարվելու է արտադրամասում, որը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող N 8 պոմպակայանի շենքում, համապատասխան վերանորոգումից հետո: Պոմպակայանի շենքի մակերեսը կազմում է 0.0691հա: Արդյունահանման թույլտվություն ստանալուց հետո անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով կիրականացվի հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն: Տարածքը երկար տարիներ գտնվում է մարդու ակտիվ գործունեության գոտում:

Հայցվող տարածքի շրջանը հարուստ է խորքային՝ արտեզյան ջրերով և աղբյուրներով: Լոռու սարահարթի ստորերկրյա ջրերի ավազանը գտնվում է Ձորագետ և Տաշիր գետերի վերին և միջին հոսանքներում, ներկայացված այլուվիալ դելյուվիալ նստվածքներով՝ ծածկված լավային ապարների (բազալտներ, անդեզիտա բազալտներ) հզոր շերտով:

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է մոտակա ջրային ռեսուրսից՝ Տաշիր





գետից մոտ 40 մ, Ձորագետից՝ մոտ 60մ, անտառածածկ տարածքից՝ 1.5 կմ, Ստեփանավանի անտառտնտեսության տարածքից՝ 2.3 կմ:

Հայցվող տարածքի սևահողերի հզորությունը տատանվում է 0.10-ից 0.45մ սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքում անտառային բուսականությունը բացակայում է: Գործունեության տարածքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, չեն արձանագրվել ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների աճելավայրեր կամ ապրելավայրեր, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության օբյեկտներ: Տարածքում առկա են կտրուկ ժայռային թեքություններ, տարածքը ծառապատ չէ, տեղ-տեղ առկա է խոտածածկ՝ փշային թփուտների, մացառների տեսքով:

Հորատանցքում ջրի ստատիկ մակարդակը 11.4մ երկրի մակերևույթից բարձր է, ջերմաստիճանը 7.80C, հանքայնացումը 0.19գ/լ, կոշտությունը 1.23 մգ/էկվ.լ: Ջուրն ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատային, մագնեզիում-նատրիում-կալցիումային է: Համաճարակայնության տեսակետից հանքավայրի Գետավանի տեղամասի ջրերն ունեն նպաստավոր օրգանոլեպտիկ հատկություններ, կոլի-ինդեքսը փոքր է 3-ից, միկրոօրգանիզմների քանակը 1 լիտր ջրում չի հասնում 100-ի: Կատարվել է հորատանցքի ջրի քիմիական անալիզ՝ 2023թ. դեկտեմբերի 13-ի ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ Հիդրոերկրաքիմիական լաբորատորիա»-ի կողմից: Համաձայն անալիզի արդյունքների՝ հորատանցքի ջուրը լիովին համապատասխանում է ՀՀ-ում ընդունված խմելու ջրի որակական նորմերին և միջազգային ստանդարտներին: Հանքավայրի Գետավանի տեղամասի հորատանցքի շահագործումը ընկերությունը կիրականացնի փակ ռեժիմով, հորատանցքի գլխամասը կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափերով: Կտեղադրվեն տվյալների առցանց փոխանցման ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր:

Ջրհավաք հորատանցքի շուրջը ստեղծվելու է սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտի, ինչի նպատակն է քաղցրահամ ջրերի պահպանությունը և աղտոտումը կանխարգելելը: Գոտին ցանկապատվելու և ապահովվելու է համապատասխան պահպանությամբ:

Հորատանցքի բերանի շուրջ կատարվելու է ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի հոսքը դեպի հորատանցք: Կապտաժային շինության շուրջը բացառվելու է ցանկացած տեսակի գործունեություն, որը կարող է որևէ կերպ ազդել քաղցրահամ ջրի վրա: Այն կնպաստի ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանմանը, աղբյուրի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելուն: Քաղցրահամ ջրի հորատանցքի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրա գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտու առկայության





և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Հողամասում բացակայում են քանդման ենթակա շենք շինություններն, ուստի քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Շինարարական աշխատանքների իրականացման համար շինհրապարակ չի կազմակերպվելու, ելնելով նախատեսվող աշխատանքների բնույթից, օգտագործվելու է ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքով անցնող գրունտային ճանապարհը: Աշխատողների սպասարկման համար օգտագործվելու է տարածքում առկա պոմպակայանի շենքը, որտեղ տեղակայվելու է՝ գրասենյակ, հանդերձարան, բիզուզարան 1 հատ: Տեղադրվելու է աղբի տարա՝ 1 հատ: Տարածքն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Հորատանցքի սանիտարապաշտպանիչ գոտու ձևավորման ժամանակ կատարվելու են մոտ 12մ<sup>3</sup> /բուսահող/ ծավալի հողային աշխատանքներ՝ մեխանիկական եղանակով՝ բահերով:

Շինարարության փուլում տեխնիկա-տրանսպորտային միջոցներից օգտագործվելու է միայն բեռնատար՝ բետոնանյութը և այլ նյութեր տեղափոխելու համար: Այն կայանվելու է գրունտային ճանապարհի եզրին: Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհից և առկա ենթակառուցվածքներից: Խմելու ջրի ջրամատակարարման համար օգտագործվելու է հորատանցքի ջուրը: Կեղտաջրերի հեռացման համար տեղադրվող բիզուզարանը՝ 2\*1,5 չափերի է, որը շինաշխատանքների ավարտից հետո ապամառնտաժվելու է: Գործունեության իրականացման ընթացքում շինաղբ չի առաջանալու: Առաջանալու է միայն կենցաղային աղբ՝ 15,2 կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5\*1 չափերի 1 պլաստիկ աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը կկատարվի համայնքապետարանի համաձայնությամբ՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է 375մ<sup>2</sup> մակերեսով հորատանցքի տարածքի բարեկարգում՝ հանված բուսահողով: Շշալցման գործարանի տարածքը հետագայում բարեկարգվելու է, կանաչապատվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայնեցնելով Ստեփանավան համայնքապետարանի հետ:

**Արտադրամաս.** Ընկերությունը շշալցման գործունեությունն իրականացնելու է հորատանցքից դեպի հարավ-արևելք՝ մոտ 770մ հեռավորության վրա գտնվող, իր սեփականությունը հանդիսացող շշալցման գործարանի՝ նախկին թիվ N 8 պոմպակայանի տարածքում: Արտադրամասի տարածքն ապահովված է էլեկտրամատակարարման համակարգով: Հողամասի տարածքի մակերեսը կազմում է 691.0մ<sup>2</sup>, իսկ շինության՝ 508.5մ<sup>2</sup>: Արտադրամասի շենքը կլինի երկու հարկանի: Նախատեսվող արտադրամասը կազմակերպվելու է գոյություն ունեցող պոմպակայանի շենքում՝ 508.5մ<sup>2</sup> մակերեսի վրա: Կատարվելու են պոմպակայանի





շենքի վերանորոգման աշխատանքներ: Շենքի ներսում՝ շալցման արտադրամասում տեղադրվելու են արտասահմանյան արտադրության ժամանակակից սարքավորումներ, լվացման, շալցման ավտոմատ հոսքագծեր: Այն ունենալու է հումքի և պատրաստի արտադրանքի պահեստներ, լաբորատորիա, աշխատողների համար սննդի սենյակ(ճաշարան), սանհանգույց, վարչական բաժին, պահակատուն և այլն: Ընկերությունը նախատեսում քաղցրահամ ջրերի շալցման գործունեությունը իրականացնել տարեկան 300 օր երկու հերթափոխ աշխատանքային ռեժիմով՝ տարեկան՝ 83.160մ<sup>3</sup> առավելագույն քանակով: Լինելու 2 հոսքագիծ՝ յուրաքանչյուրի արտադրողականությունը 12,0հազ. շիշ 1 ժամում: Խմելու ջրի շալցումը կատարվելու է 0,5 լիտրանոց ապակյա և 1-1,5լիտր տարողության պլաստիկ շշերով: Քաղցրահամ ջրի շալցման արտադրական տեխնոլոգիական ցիկլը ներառելու է.

- Ապակյա տարրայի դեպքում կատարվում է շշերի ավտոմատ լվացում, տեղափոխում և ցայում, իսկ պլաստիկ տարաների դեպքում կատարվելու է պրեսֆորմանների լիցքավորում դեպի շափչման համակարգ և շափչում:
- Քաղցրահամ ջրի ավտոմատ շալցում և խցանավորում:
- Շալցված տարաների որակի ստուգում (խոտանված տարաները հանվում են):
- Արտադրանքի պիտակավորում, փաթեթավորում և պահեստավորում: Խմելու ջրի վաճառքը կատարվելու է ներքին և արտաքին շուկայում՝ պայմանագրային հիմունքներով: Շալցված ջուրը մատակարարվելու է սեփական մեքենաներով կամ պայմանագրային հիմունքներով:

**Պատճառաբանական մաս.** Գնահատման հայտի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է շահագործման փուլում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են՝

- ջրային ռեսուրսների օգտագործման, հնարավոր աղտոտման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների առաջացման և կառավարման,
- մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ՝ շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի), (ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 10 մ<sup>3</sup> ծավալով: Կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 15.2կգ/տարի, շահագործման փուլում՝ 7200 կգ/տարի: Մետաղական լարերի մնացորդներ (ծածկագիր՝ 35131100 01 00 4)՝ 2կգ: Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի









## Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

### Ապահովել պահանջների կատարումը աշխատանքները սկսելու պահից:

- Հողի բերրի շերտի պահպանությունը իրականացնել համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- Նվազագույնի հասցնել բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացնել սեղմ ժամկետներում, պարտադիր մեխանիկական եղանակով՝ բահերով:
- Պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003 12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները:
- Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թ. մարտի 10-ի «Պարենային հումքի եվ սննդամթերքի անվտանգությանը եվ սննդային արժեքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2 III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին» N 06-Ն հրամանի պահանջները:
- «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի պահանջները
- Աշխատանքները սկսել համապատասխան երկարաձգված ջրօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո:
- Խմելու-տնտեսական ջրամատակարարման աղբյուրների ընտրությունը և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիների չափերի սահմանումն անհրաժեշտ է իրականացնել համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի նոյեմբերի 29-ի N803 հրամանով հաստատված N2-III-Ա2-2 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների՝ ապահովելով խմելու ջրի որակի մանրէաբանական, քիմիական, ճառագայթային անվտանգության նորմերը:
- Հորատանցքի սանիտարական գոտին պետք է պարսպատված լինի մետաղական կամ քարե ցանկապատով: Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքի մոտ կազմակերպել այնպես, որ հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքի սահմաններից դուրս:





## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայրի Գետավանի տեղամասի թիվ 78P հորատանցքից ջրի արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի տեղակալ՝

A handwritten signature in blue ink, appearing to be 'Լ. Կերիքնազ'.

Լերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
գլխավոր մասնագետ՝

A handwritten signature in blue ink, appearing to be 'Շուշանիկ Կարապետյան'.

Շուշանիկ Կարապետյան